ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

3 նոյեմբերի 2014 թվականի N 76-Ա

<<ԳՈՐԻՍԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ>> ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՆՎՃԱՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՄԱՏՈՒՑՎԱԾ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի>> մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասով, <<Բաժնետիրական ընկերության մասին>> ՀՀ օրենքի 68-րդ հոդվածի 6-րդ կետով, Հայաստանի Հանրապետության նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի <<Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին>> ՆՀ-728 հրամանագրի 1.17 կետի ա) ենթակետով *կարգադրում եմ՝*

1. <<Գորիսի բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերությունում ՀՀ կառավարության 2004 թվականի մարտի 4-ի << Պետության կողմից երաշխավորված անվճար եվ արտոնյալ պայմաններով բժշկական օգնության եվ սպասարկման մասին>> N318-Ն որոշման պահանջները ուսումնասիրելու նպատակով ստեղծել աշխատանքային խումբ հետևյալ կազմով.

Գևորգյան Նունե – ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության առողջապահության բաժնի պետ

Դավթյան Սուսաննա - ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի Ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ

Կոզմանով Կառլեն - ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ

2. Հանձնաժողովին՝ կատարված ուսումնասիրությունների վերաբերյալ եռօրյա ժամկետում ներկայացնել տեղեկատվություն:

3. ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին՝ ապահովել սույն կարգադրությունից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ ***Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ***

2014թ. նոյեմբերի 3
ք. Կապան